

Գագիկ Մ. Սարգսյան  
Արտակ Վ. Գնունի,  
*Պատմ.գիյր. թեկնածու*  
Ալեքսան Հ. Հակոբյան  
*Պատմ.գիյր. թեկնածու*

**ՍՅՈՒՆԻՔԻ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ  
Մ. Թ. Ա. ՈՒ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ**

Նախնական դիտարկումներ Աղավնո գետի ավազանում  
2013 թ. դաշտային հետազոտությունների տվյալների  
հիման վրա\*

**Բանալի բառեր** – Սյունիք, Քաշաթաղ, Եզնա-  
գումեր, ամրոց, պարիսպ, դամբանադաշտ, խեցե-  
ղեն, բնակատեղի, միջնաբերդ, աշտարակ:

Մուտք

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի տարածքի ուսումնասիրությունը սկսվել է XIX-XX դարերի սահմանագլխին, դեռևս 1896 թ. Սերտ (Ջերտի) գյուղի մոտ հայտնաբերվել և Սանկտ Պետերբուրգի հնագիտական հանձնաժողովին է հանձնվել անտիկ ճրագաման, որի վերնամասը ձևավորված էր անտիկ թատերական դիմակի տեսքով<sup>1</sup>:

Առանձին հուշարձանների մասին հիշատակումներ են պարունակում **Ղ. Ալիշանի** և **Մ. Բարխուդարյանցի** աշխատանքները<sup>2</sup>: Միջնադարյան հուշարձանների առաջին լուրջ հետազոտություններն իրականացրել է **Ե.**

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 3.02.2014:

1 Տե՛ս **В. М. Сысоев**. Краткий очерк истории Азербайджана (северного). Баку, 1925, с. 22.

2 Տե՛ս **Հ. Ղ. Ալիշան**, Սիսական. Տեղագրություն Սիսական աշխարհին, Վենետիկ – Ս. Ղազար, 1893, էջ 265–271; **Մ. Եպս. Բարխուդարյանց**, Արցախ, Ստեփանակերտ, 1995, էջ 257–258:

Զ (ԺԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ՎԷ՛՛՛՛՛ հասանալիական հանդես



կայացված են նաև **Մ. Հասրաթյանի, Վ. Հարությունյանի, Լ. Բրետանիցկու, Ի. Շչերլիկինի** և այլոց աշխատություններում<sup>7</sup>: Օտարազգի մասնագետները խորհրդային շրջանում, բնականաբար, հատուկ ուշադրություն են դարձրել մահմեդական հուշարձանների հետազոտությանը<sup>8</sup>: Հետազոտվել են նաև քարանձավային բնակատեղիները: Մասնավորապես, այդ հարցերն արծարծվել են **Կ. Ալեքսերովի, Լ. Բրետանիցկու, Ի. Զաֆարգադեի** աշխատություններում<sup>9</sup>: Սակայն վաղ շրջանի հուշարձանները արժանացել են միայն դիպվածային ուսումնասիրության<sup>10</sup>:

Ազատագրումից հետո շարունակվեցին ինչպես միջնադարյան, այնպես էլ վաղ հուշարձանների պեղումները<sup>11</sup>: Դրանով հանդերձ, Քաշաթաղի շրջանի հնագիտական ուսումնասիրությունը դեռևս հեռու է ամբողջական լինելուց: Մասնավորապես, առ այսօր գրեթե ուսումնասիրված չեն տարածաշրջանի հնագույն բնակավայրերը և ամրոցները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության ծրագրով իրականացվող ԼՂՀ տարածքի պատմամշակութային հուշարձանների վկայագրման ու գոտիավորման աշխատանքների շրջանակներում 2013 թ. հետազոտվեցին Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի ավազանի հուշարձանները: Դաշտային հետախուզական արշավախմբի կազմում էին հնագետ **Գ. Մ. Սարգսյանը**, ազգագրագետ **Լ. Հովհաննիսյանը**:

7 Տե՛ս **Մ. Հասրաթյան**, Ծիծեռնավանք, Պատմա-հնագիտական աշխատություններ, Եր., 1985, էջ 219–240; **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 114–115; Атлас Азербайджанской ССР, Баку, 1963, с. 206–209; **И. П. Щелькин**, Памятники VIII–XI вв. – В. кн.: Архитектура Азербайджана. Эпоха Низами. М.–Баку, 1947, с. 34–52; **Л. С. Бретаницкий, Б. В. Вейнмарн**, Искусство Азербайджана IV–XVIII вв. М., 1976, с. 7; **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական և վիճակագրական հետազոտություններ (Արցախ և Ուտիք), Վիեննա–Եր., 2009:

8 Տե՛ս Атлас Азербайджанской ССР, с. 206–209; **И. П. Щелькин**, Мавзолеи бассейна реки Акерачай. – В кн.: Архитектура Азербайджана. Эпоха Низами. М.–Баку, 1947, с. 157–166; **А. В. Саламзаде**, Архитектура мавзолеев Азербайджана. – В кн.: Архитектура Азербайджана. Очерки. Баку, 1952, с. 238, 251, 261, 279; **Л. С. Бретаницкий**, Зодчество Азербайджана IV–XVIII вв. М., 1976, с. 128–130, 198–199; **Л. С. Бретаницкий, Б. В. Вейнмарн**, նշվ. աշխ., էջ 82; **С. Нейматова**, Открытие новых эпиграфических памятников в Азербайджане. – Археологические открытия за 1974 г. М., 1975, с. 473–474; նույնի՝ Мемориальные памятники Азербайджана. Баку, 1981, с. 33–44; **М. Мемедзаде**, Исследование мавзолея в селе Мемедбейли Зангеланского района. Археологические и этнографические исследования в Азербайджане (1975). Баку 1978, с. 68–72.

9 Տե՛ս **И. М. Джафарзаде**, Следы древнейшей культуры на территории Азербайджана. – Известия Аз. ФАН СССР. 1944. N 9, с. 54–72; **А. К. Алекперов**, К вопросу об изучении культуры курдов. Лачинский и Кельбаджарский районы. – В кн.: Исследования по археологии и этнографии Азербайджана. Баку, 1960, с. 134–169; **М. Усейнов, Л. Бретаницкий, А. Саламзаде**, История архитектуры Азербайджана. М., 1963, с. 18; **Л. С. Бретаницкий**, նշվ. աշխ., էջ 18.

10 Տե՛ս **В. А. Алиев**, Исследования в Лачинском районе. – Археологические открытия за 1980 г. М., 1981, с. 414–415.

11 Տե՛ս **Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Ա. Գնունի**, Արցախի ազատագրված շրջանների 1990–2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները, Եր., 2005; **Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, Ա. Թաղևոսյան**, Հնագիտական հետազոտություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, – Հնագիտական ուսումնասիրությունները Արցախում 2005–2010 թթ., Ստեփանակերտ, 2011, էջ 41–65; **Ա. Ղուլյան**, Քաշաթաղի իշխանական ապարանքը, – Հայ արվեստի հանրապետական VII գիտական ժողով (գեկուցումների թեզեր), Եր., 1995, էջ 36–37; **Ս. Շահինեան**, Քաշաթաղի ժայռափոր ճարտարագիտական կառույցները, – «Հանդես ամսօրեայ», N 129, Վիեննա, 2003, էջ 140–168:

**յանը** (ԼՂՀ Մշակույթի փոխնախարար), բանասեր **Զ. Ըռքոյանը** (Քաշաթաղի շրջանային «Մերան» թերթի խմբագիր): Աշխատանքներին մասնակցել է նաև երիտասարդ հնագետ **Ա. Գուրյանը** և ԵՊՀ-ի հնագիտության լաբորատորիայի գիտաշխատող **Ա. Գնունին**<sup>12</sup>: Արշավախումբը նպատակ ուներ սիստեմատիկ հնագիտական հետախուզական աշխատանքներ իրականացնելով՝ հնարավորինս մանրամասն հետազոտել տարածքը, հայտնաբերել, անձնագրավորել մինչ օրս չբացահայտված ու չհաշվառված հուշարձանները՝ ստեղծելով շրջանի պատմամշակութային ժառանգության առավել ամփոփ պատկերը:

## 1. Հետազոտված տարածքի աշխարհագրական և երկրաբանական համառոտ բնութագիրը

Ուսումնասիրվող տարածքի հուշարձանների հետազոտության աշխատանքները տարբերվում են մյուս շրջաններից նրանով, որ այստեղ ոչ միշտ են աշխատում դաշտային հետախուզության այնպիսի ավանդական մեթոդներ, ինչպիսիք են բնակչության հարցումն ու տարածքի համատարած վիզուալ զննումը՝ տարածքի համեմատաբար նոր և նորս բնակեցման և քարտեզներում նշված դաշտամիջյան շատ ճանապարհների քայքայվածության և անանցանելիության պատճառով<sup>13</sup>:

Այստեղ առաջին անգամ դաշտային հնագիտական հետախուզական աշխատանքներն իրականացնելիս օգտագործվեց տարածքի նախնական հետազոտությունը «**Google earth**» համակարգի տիեզերական եռաչափ լուսանկարներով ուսումնասիրելու մեթոդը: Խնդրո առարկա տարածքի պատկերները ուսումնասիրելիս առանձնակի ուշադրություն է դարձվում ռելիեֆի այն հատվածներին, ուր տեսականորեն կարող են տեղադրված լինել հնագույն ամրոցներ, բնակավայրեր, դամբարանադաշտեր: Այստեղ, պետք է կարողանալ տարազատել հին ու նոր ճանապարհները, արահետները, բնական ժայռագծերը, ժայռային մերկացումները, բնական ու արհեստական քարակուտակումներն ու դարավանդները, մելիորացված ու քարահավաքումներով մաքրված հողահատվածներն ու նրանց սահմանագծերը, անասնափարախները և շատ այլ բնական ու ձեռակերտ կազմավորումներ, որոնք կապ չունեն հուշարձանների հետ: Կասկածելի կետերը համադրվում են 1:25 000 և 1:50 000 տոպոգրաֆիական քարտեզների հետ, լրացվելով նրանցում եղած տեղեկատվությամբ: Կատարվում է նաև հակառակ գործընթացը. քարտեզներում նշված առանձնացված գերեզմանոցները, փլատակները (развалины), որոնք հիմնականում լքված գյուղատեղիներ են կամ ամրոցներ, համադրվում են տիեզերական լուսանկարների հետ: Այսպես հավաքված ու զտված հավանական հուշարձաններից վերցվում են աշխարհագրական կոորդինատները:

Գործընթացի երկրորդ՝ դաշտային փուլում, նշված կետերի կոորդի-

12 Ա. Գնունու մասնակցությունը արշավախմբի աշխատանքներին իրականացվել է «Պատմական Սյունիքը բրոնզի և երկաթի դարերում (ըստ նորագույն հնագիտական տվյալների)» 13-6A395 թեմայի շրջանակներում:

13 Տե՛ս Դ. **А. Авдусин**. Полевая археология СССР. М., 1980, с. 63-65.

նատները ներբեռնելով GPS նավիգատորի հիշողություն և հետևելով նավիգատորի ակտիվացրած «գնալ դեպի» ծառայության ցուցումներին, գնում ենք տեղում գտնելու ենթադրյալ հուշարձանը: Միայն դաշտում կատարված հետազոտության արդյունքում վստահապես փաստագրվում և վկայագրվում է նորահայտ հուշարձանը:

Նշված մեթոդաբանությամբ Աղավնո և Հոչանց գետերի ավազաններում, ինչպես նաև Որոտանի ավազանի վերնամասում և Քաշաթաղի շրջանի այլ կետերում մեր կողմից փաստագրվել է ավելի քան 35 հնագիտական հուշարձան, որոնցից 18-ը տեղում ստուգելուց և ուսումնասիրելուց հետո հստակ փաստագրվել են որպես բրոնզի դարաշրջանից միջնադար ընկած ժամանակահատվածների նորահայտ ամրոցներ ու բնակատեղիներ: Մասնավորապես Աղավնոյի ավազանում փաստագրվել և տեղում հաստատագրվել են Սպիտակաջրի, Եզնագոմերի, Աղվեսահակի, Հերիկի, Հակի, Ղուշչիի, Տանձուտի և Արահուծի ամրոցներն ու նրանց հարող բնակատեղիներն ու դամբարանադաշտերը: Բացի այդ, համակարգչային եղանակով հաստատագրվել են ևս մեկ տասնյակից ավելի նմանատիպ հուշարձաններ, որոնց դաշտային հետազոտությունները պետք է իրականացվեն 2014 թ.:

**Աշխարհագրականորեն տարածքն ընդգրկում է ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հյուսիսարևմտյան մասը**, որը համապատասխանում է պատմական Սյունիքի արևելյան հատվածին: Ղարաբաղյան լեռները փաստորեն ջրբաժան են հանդիսանում մի կողմից՝ Կուրի աջ վտակների, մյուս կողմից՝ Արաքսի ձախ վտակ Հակարիի և նրա օժանդակ Շալուայի միջև<sup>14</sup>:

Տարածքը տեղադրված է Սյունիքի հարավ-արևելքում գտնվող Գորիսի թեք սարահարթի վրա, որը կազմված է պիրոկլաստներից: Սարահարթը խիստ կտրտված է Գորիս, Խնածախ, Բայանդուր և այլ գետերի հովիտներով, որոնց միջև տեղադրված են սարահարթի մնացուկները: Դեպի արևելք Գորիսի թեք սարահարթը զգալիորեն լայնանում է և անցնում Հակարիի թեք հարթավայրին՝ կազմված հրաբխածին-պրոլյուվիալ նստվածքներով<sup>15</sup>:

Գորիս-Բերձոր ճանապարհը և Հակարիի հովիտը կազմված են ալշերոնյան տարիքի պալեոորոտանյան հզոր գլաքարային նստվածքներով, որոնք մանավանդ դիտարկվում են Լիսագորի լեռնանցքի շրջանում: Հակարիի հովտում գլաքարային հաստվածքի հզորությունը կազմում է 180-200 մ<sup>16</sup>:

Աղավնո գետի հովիտը կազմված է բազմաթիվ և բազմատեսակ ինտրուզիվ և հրաբխային ապարներով, որոնք տարածվում են վերին յուրայի դարաշրջանի կրաքարային խոշոր հաստվածքների մեջ: Արվական գյուղից հյուսիս, գետի վերին հոսանքում գերիշխող են թուրինյան ժամանակաշրջանի ինտրուզիվ ապարները, որոնք ներկայացված են դիաբիտային պորֆիրիտներով (Եզնագոմեր գյուղի տարածք)<sup>17</sup>:

14 Տե՛ս Ա. Ոսկանյան, Հայկական լեռնաշխարհ, Եր., 1979, էջ 15:

15 Տե՛ս Ս. Բալյան. Структурная геоморфология Армянского нагорья и сопредельных областей. Ер., 1969, с. 276-277.

16 Տե՛ս նույն տեղում, էջ 283; Геология СССР. М., 1975, с. 384.

17 Տարածքում երկրաբանական դիտարկումներ 1996-2001 թթ. կատարել է Գ. Խաչատրյանը:

Շրջանը տեկտոնիկայի առումով խիստ ակտիվ է: Այստեղ դիտարկվում են բազմատեսակ խախտումներ, որոնց հետևանքով տարբեր ժամանակաշրջանի և տարբեր բնույթի ապարները հաճախ հերթափոխվում են: Օրինակ՝ Եզնագոմեր գյուղի շրջակայքում դամբարանադաշտն ամփոփված է գրանոդիորիտային ինտրուզիվ զանգվածների վրա նստած չորրորդական շրջանի նստվածքների մեջ, որոնք վերածվում են երրորդական ժամանակաշրջանի էֆուզիվ ապարների: Նմանատիպ խախտման օրինակ են Հակ գյուղի տարածքում գտնվող հանքային ջրերի ելքերը, որոնք խորքային բաթոլիտների առկայության արդյունք են: Վերոհիշյալ բոլոր ժամանակաշրջանների ապարները բազմաթիվ տեղերում կտրատված են դայկային մարմիններով, որոնց հզորությունը 0,5-5,5 մ է: Օրինակ՝ Ծիծեռնավանք գյուղից արևելք, Աղավնոյի աջ ափին, յուրայի ժամանակաշրջանի կրաքարային հսկայական հաստվածքը կտրված է դացիտային կազմի խոշոր (2,5-3 մ) դայկայով, որը և առաջացնում է Ագռավաքարի (?) ժայռը: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ դայկային առաջացումները ներթափանցում են բոլոր ապարների մեջ, բացի երրորդական ժամանակաշրջանի լավային հոսքերից (օրինակ՝ Եզնագոմերի տարածք): Ինտրուզիաներին վերաբերող տարբեր մերկացումներում (Արտաշավի, Վաղագին) նկատելի են հանքայնացման երևույթներ: Հավանաբար, նույն ինտրուզիվ մարմինը տարածվում է մինչև Տրտուի ձախ վտակ Լևագետի հովիտը, որտեղ էլ գտնվում են ոսկու հանքերը: Բացառված չէ, որ նույն հանքայնացման գոտուն է վերաբերում նաև Դադիվանքի սնդիկը:

Ստորին յուրայի կրաքարային հաստվածքների մեջ որոշ վայրերում (Մշենի, Հոչանց) առաջացել են երկրորդական կարստային քարայրեր, որոնք հետագայում օգտագործվել են որպես բնակատեղիներ: Աղավնո գետի ձախ ափին, Հերիկ և Տանձուտ գյուղերից հյուսիս գտնվող քարայրերն առաջացել են երրորդական շրջանի դիաբազային հոսքի և կրաքարի միացումից:

Շրջանի երկրաբանական հուշարձաններից է Ծիծեռնավանք գյուղից հյուսիս-արևմուտք, ոչ մեծ գետակի ձախ ափին նկատվող դիորիտային հսկա զանգվածը, որը խարսխված է մոտ 1,5 մ տրամագիծ ունեցող կրաքարային սյան վրա<sup>18</sup>: Մինևույն ժամանակ, ուսումնասիրվող տարածաշրջանում չորրորդական շրջանում հրաբխային գործունեությունը զգալիորեն նվազել է Հայաստանի կենտրոնական և արևմտյան շրջանների համեմատությամբ<sup>19</sup>:

## 2. Հնագիտական հուշարձանների տեղադրությունը

Հակարիի աջ վտակ Աղավնո գետի և նրա վտակների հովիտները հնագույն ժամանակներից հանդիսացել են բնակության վայրեր: Հնագույն գտածոները բնորոշ են վաղ երկրագործական շրջանին<sup>20</sup>: Վաղ բրոնզին

Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Նորահայտ հուշարձաններ Աղավնո գետի վերնահոսանքում, «Հուշարձան», Զ, Եր., 2010, էջ 53-54:

18 Տե՛ս նույն տեղում:

19 Տե՛ս Геология СССР, с. 412.

20 Տե՛ս Հ. Սիմոնյան, Հ. Սանամյան, Ա. Գնունի, Արցախի և ազատագրված շրջանների 1990-

բնորոշ նյութեր հաստատագրված են Քարահունջից, Եզնագոմերի Ավագահանքի բնակատեղիից (ՔԵԹ 22/2, 92/2)<sup>21</sup>: 2013 թ. շենգավիթյան մշակույթի նյութեր հայտնաբերվել են Քաշաթաղի շրջանի Արահուծ գյուղից ոչ հեռու Դուզդաղ բնակատեղիում (N. 39 37 17,8 E. 46 27 12,5 Alt. 1045):

Մ. թ. ա. II հազ. նյութեր տարածաշրջանում հայտնի են Խնձորեսկից և Եզնագոմերից (ՔԵԹ 25/2, 31/2, 34/2, 41/2, 43/2): Միջին բրոնզի առանձին բեկորներ հայտնի են Ավագահանքի բնակատեղիից (ՔԵԹ 55/2)<sup>22</sup>: Միջին բրոնզին՝ մ. թ. ա. XIX դ. բնորոշ վերգետնյա նյութ հայտնաբերված է նաև 2013 թ. վկայագրված Աղվեսահաքիի (N 39 41 52,6 E. 46 15 59,9 Alt. 1560), ինչպես նաև Միրիկի ամրոցներից (N 39 41 23,3 E. 46 19 39,6 Alt. 1601), իսկ XIX–XVI դդ. բնորոշ նյութ՝ Ղուշչիի ամրոցից (N. 39 40 22,4 E. 46 21 22,0 Alt. 1458):

Հավանաբար, ուշ բրոնզի դարաշրջանին է պատկանում նաև Ղալաջիկի դամբանադաշտից 2013 թ. հայտնաբերված կուռքը (N 39 39 49,2 E. 46 21 45,7 Alt. 1470): Կուռքի գլուխը նշված է ռելիեֆ մի փոքր թեք շրջանակով, աչքերը և բերանը փորագիր են, իսկ քիթը՝ ռելիեֆ: Իրանն իջնում է ոչ թե ուղիղ, այլ որոշակի թեքությամբ, ինչը, հավանաբար, պետք է խորհրդանշի նստած դիրքը: Արձանի ստորին հատվածում փոսիկ է, ինչը պետք է նշանակի սեռական (իգական) պատկանելությունը: Արձանն իր որոշ առանձնահատկություններով (նստած դիրքը, դեմքի թեքությունը) նմանվում է Մեծամորից հայտնաբերված արձանիկին<sup>23</sup>: Դիմագծային առանձնահատկություններով այս արձանն իր բազմաթիվ զուգահեռներն ունի Հայաստանի ուշ բրոնզ - երկաթեդարյան քանդակում (Նավուր, Էրեբունի և այլն)<sup>24</sup>: Հաշվի առնելով դիմագծային և կերտման առանձնահատկությունները՝ նշված արձանը, ըստ **Բ. Առաքելյանի** տիպաբանության, կարելի է դասել ավանդական-պայմանական ոճի հուշարձանների առաջին խմբին<sup>25</sup>: Կուռքի շուրջը վկայագրված են կիկլոպյան եղանակով շարված, հնարավոր է՝ ծիսական կառույցի հետքեր:

Բացառված չէ, որ նույն ժամանակաշրջանում են կերտված նաև Արվականի մեծ դամբարանում հայտնաբերված կուռքերը, որոնցից մեկն, ամենայն հավանականությամբ, պատկերում է արջ, իսկ մյուսը՝ գիշատիչ թռչունի ձագ: Վերջինիս կերտման առանձնահատկությունները հուշում են, որ այն պետք է ագուցված լիներ պատի մեջ և միայն հետագայում օգտագործվեր դամբարանի խցի շարվածքում (ՔԵԹ 134/1, 135/1)<sup>26</sup>: Ի դեպ, երկրորդ կուռքը որոշակի նմանություններ ունի Քուչակ IV-ի թիվ 11

2005 թթ. հնագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները (ցուցահանդեսի ցանկ), Եր., 2007, էջ 13:

21 Ավագահանքի բնակատեղիի նյութերը պահպանվում են Քաշաթաղի երկրագիտական թանգարանում (այսուհետև՝ ՔԵԹ: այստեղ և ստորև հղումները ՔԵԹ-ում պահպանվող նյութերի ինվենտար համարներին՝ բնագրում): Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 61; Օ. Ջնկիյան. Syunig during Bronze and Iron Ages. Barrington, 2002, p. 22.

22 Տե՛ս Օ. Ջնկիյան, նշվ. աշխ., էջ 50:

23 Հմմ. Ս. Ա. Есаян. Скульптура Древней Армении. Ер., 1980, с. 51, 69, таб. 23; Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Եր., 1979, էջ 138–139, նկ. 142, 143:

24 Տե՛ս Ս. Ա. Есаян. Скульптура..., таб. 22 (1), 42(1).

25 Տե՛ս Բ. Առաքելյան, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Եր., 1976, էջ 14:

26 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 58–59:



դամբարանից հայտնաբերված կուռքի հետ<sup>27</sup>: Ուշ բրոնզի դարաշրջանին բնորոշ խեցեղեն հայտնաբերված է նաև Միրիկի ամրոցում:

Մ. թ. ա. II հազ. վերջում և I հազ. սկզբում տարածաշրջանում, ինչպես ամբողջ Հայկական լեռնաշխարհում, արձանագրվում է տնտեսական և քաղաքական կյանքի աշխուժացում, ինչը վկայված է ինչպես բնակավայրերի և դամբանադաշտերի առկայությամբ, այնպես էլ ուրարտական արձանագրություններում պահպանված վկայակոչումներով: Մասնավորապես, ըստ **Հ. Կարագոզյանի՝** Աղահեջք գավառի անվանումը (որի կազմի մեջ, ըստ «Աշխարհացոյց»-ի, մտնում էր Աղավնոյի հովիտը) հիշատակվում է Ռուսայի ծովինարի ժայռափոր արձանագրությունում՝ **Էլաինե** ձևով<sup>28</sup>: Վերջինից, ըստ հեղինակի, կարող է ծագած համարվել նաև նույն գավառի Հայելեակ գյուղը (Ծիծեռնավանքից 5 կմ արլ)<sup>29</sup>:

Հնագիտորեն նշված շրջափուլը տարածաշրջանում ներկայացված է մի շարք հուշարձաններով: Դրանց առավել մեծ կենտրոնացում նշված ժամանակաշրջանում դիտարկվում է Հակ-Սպիտակաջուր-Եզնագոմեր հատվածում: Միսիանի զորավարժարանից մոտ 6 կմ արևելք նշարվում են կիկլոպյան շարվածքի հետքեր<sup>30</sup>: Այս հատվածը փաստորեն հանդիսանում է Միսիանի տարածաշրջանից Քաշաթաղի շրջանով դեպի Արցախ տանող, ինչպես նաև Աղավնոյի և Հոչանցի հովիտների երկայնքով անցնող ճանապարհների խաչմերուկ:

Տվյալ հատվածում կիկլոպյան խոշոր ամրոց է հաստատագրված Սպիտակաջուրում՝ գյուղի հյուսիսային եզրին (N. 39 46 58, I E. 46 15 31, 7 Alt. 1865), Հոչանց գետի անդնդախոր կիրճի վրա կախվող արլ-արմ. ձգվածությամբ երկարավուն բլրի վրա: Բլուրը երեք մատչելի կողմերից ամրացված է կիկլոպյան շարվածքով դրված պարիսպներով: Միջնաբերդը բազմած է եղել բլրի արևելյան, համեմատաբար բարձրադիր եզրին և առանձին պարսպագծով անջատվում էր հիմնական ամրոցից: Բնակատեղին տարածվել է նաև արևմտյան փոքր բլրի վրա, ուր պահպանվել են նաև դամբարաններ: Ինչպես բուն ամրոցում, այնպես էլ միջնաբերդի ներսում ուրվագծվում են խոշոր քարերով դրված պատերի ու շինությունների հետքեր, պատաշարերով փակվող ընդարձակ տարածություններ: Ամրոցը շատ վատ է պահպանվել, քանի որ միջնադարում նրա վրա բնակավայր է գոյացել: Հուշարձանին ավելի մեծ ավերածություններ են հասցրել խորհրդային շրջանում ամրոցի ներսում տրակտորներով կատարված հարթեցումները: Ամրոցանիստ բլրի հարավային պարսպագծի

27 Տե՛ս **Ֆ. Մուրադյան**, Քուչակ IV հուշարձանախմբի պեղումները, «Հուշարձան», Է, Եր., 2011, էջ 97, աղ. 19 (13):

28 Տե՛ս **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963; **Յ. Կարագեղեան**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահանգներում), Եր., 1998, էջ 189: Միտակա շրջանում է տեղորոշում Էլաինե երկիրը նաև Ն. Հարությունյանը՝ նշելով Սևանա լճից հարավ և արևելք ընկած տարածքները (ներառյալ Գեղարքունիքի հարավարևելյան մասը): Տե՛ս **Н. В. Арутюнян**, Топонимика Урарту. Ер., 1985, с. 252.

29 Տե՛ս **Յ. Կարագեղեան**, նշվ. աշխ., էջ 142:

30 Տե՛ս **Ա. Գնունի**, **Գ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 55: Անպաշտպան բնակավայրեր, այսպես կոչված «գյուղեր», վաղ երկաթի դարաշրջանում վկայված են ինչպես հնագիտորեն, այնպես էլ բիայնական արձանագրություններում. հմմ. **R. Bischope**. The Iron Age Settlement Pattern: Pre-Urartian an Urartian Periods. The North Eastern frontier. Urartians and non-Urartians in the Sevan Lake Basin. Roma, 2002 (then – North-East frontier...), p. 352.





Նկ. 2: «Եզնագոմեր» ամրոցի տեսքը տիեզերքից



Նկ. 3: «Եզնագոմեր» ամրոցի ընդհանուր տեսքը արևելքից

մոտ նկատվում է եզրագծի ժայռագիծը, դարպասի նման բացված հատված, որի ներսում փոքր քարերով շարված է մի մեծ, հավանաբար, հասարակական շինություն, իսկ դրսում՝ հենապատերով ամրացված արհեստական հրապարակ:

Բացի այդ, Բերձոր-Հակ-Արվական ձանապարհի վրա, նրա ձախ կող-

մում արձանագրվեց փոքր քարերից շարված պարսպաշար<sup>31</sup>: Վաղ երկաթի դարաշրջանին բնորոշ նյութ հայտնաբերվել է նաև Ավազահանքի բնակատեղիում (ՔԵԹ 33/2, 70/2, 157/2)<sup>32</sup>:

2012–2013 թթ. Եզնագոմեր գյուղի մոտ հաստատագրված է նաև կիկլոպյան ամրոց (N 39 44 30,7 E. 46 14 44, 6 Alt. 2002): Այն գտնվում է Եզնագոմերից 2,5 կմ հր–արմ., Հակ գյուղից 4 կմ հյուսիս, ընդարձակ սարահարթի հյուսիսային եզրագծին բարձրացող ու շրջապատի վրա գերիշխող հարթ մակերեսով բարձրադիր բլրի գագաթին: Եզնագոմերի ամրոցը Հայաստանի ամենամեծ կիկլոպյան ամրոցներից է. նրա պարսպապատով ներփակվող տարածքի երկարությունը 280 մ է, իսկ լայնությունը՝ 110 մ: Այն ամբողջ պարագծով ամրացված է մեծածավալ ձեղքած ժայռաբեկորներից չոր շարվածքով դրված և մինչև 4–5 մ բարձրությամբ պահպանված պարսպաշարերով: Պարիսպը գնում է բնական ժայռագծի ուղղությամբ, հաճախ նրա վրայով այնպես, որ տեղ–տեղ ժայռագծի ուղղահայաց կտրված ձակատը օգտագործված է որպես պարսպի ձակատ: Ամրոցի ներսում երևում են նմանատիպ շարվածքով եզերված ընդարձակ հատվածներ: Հստակ ուրվագծվում է ամրոցի գլխավոր մուտքը, որը մոտ 50–60 մ երկարությամբ, երկու կողմերից պատաշարերով ներփակված միջանցքի տեսքով միանում է հիմնական պարսպին արևմուտքից: Նմանատիպ հնարք օգտագործվել է նաև Հյուսիսարևելյան Հայաստանի մ. թ. ա. I հազ. կեսի խոշորագույն կենտրոններից մեկում՝ Աստղի բլուրում<sup>33</sup>: Նույնանման միջանցքաձև անցում հաստատագրված է նաև Նորբակ, Նեղ Բողազի Բերդ, Բրուտի Բերդ, Հերի Բերդ Մթնաձոր, Բելի Կյուչ, Մթնաձոր, Բերդի Դար ամրոցներում<sup>34</sup>: Հիմնական պարսպագծից դուրս նկատվում են բազմաթիվ մեծ ու փոքր սենյակներ և պատաշարերով եզերված մեծ հատվածներ: Տեղանքը անտառազուրկ է և պատված փարթամ խոտածակությամբ: Վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, բայց դատելով շարվածքից՝ հուշարձանը կարելի է թվագրել մ. թ. ա. II–I հազարամյակներով:

Նույն հանգույցում է գտնվում նաև Աղվեսահաքի ամրոցը: Այն գտնվում է Հակից 1,7 կմ հր–արլ, Տաք ջուր հանգստավայրից մոտ 0,7 կմ հս–արմ, Աղավնո գետի աջ ափին, Աղվեսահաքի կոչված տեղամասում: Ամրոցի միջնաբերդը տեղադրված է մոտ 120 մ տրամագծով կլորավուն թերակղզու գագաթին: Ժայռածեղերով եզերվող թերակղզին իր ամբողջ ծավալով մխրձվում է գետագծի մեջ և երեք կողմերից ողողվում Աղավնոյի ջրերով: Նմանատիպ «թերակղզի» վկայված է նաև Նորբակում<sup>35</sup>: Ամրոցը մատչելի է միայն հարավից, որտեղից հնարավոր է ամրոց ներխուժել, անցնելով թամբաձև իջվածքը և բարձրանալով ամրոցանիստ բլուրը: Վերջինս մոտ 60 մ տրամագծով, հարթ մակերեսով բլուր է, որն իր պարագծով ամրացված է կիկլոպյան շարվածքով պարսպա-

31 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 55:

32 Տե՛ս նույն տեղում, էջ 59–60:

33 Տե՛ս Շ. Ա. Եսայն. Древняя культура племен Северо-восточной Армении. Ер., 1979, с. 44.

34 Տե՛ս Խ. Տանամյան. Architectural Structure, defensive systems and building technique of the fortification. The North Eastern frontier..., p. 329.

35 Տե՛ս Ր. Բիսչոնե, Տ. Հմայակյան, Ն. Քարմեգիանի, Կ. Տայադյան. Description of the Stes. The North-Eastern frontier..., p. 63.

պով: Հարավային կողմում ուրվագծվում է ամրոցի գլխավոր մուտքը: Այն մոտ 3 մ լայնությամբ, երկու կողմերից պարսպապատերով եզերված, թամբաձև իջվածքի ստորոտից դեպի բլրի եզրի պարսպաշարը բարձրացող միջանցք է: Նույն հարավային կողմի բլրի լանջին, հիմնական պարսպագծից ներքև, նրան զուգահեռ, գնում է ամրոցի պաշտպանական համակարգի երկրորդ պարսպագիծը: Միջնաբերդի հյուսիս-արևմտյան մասի բարձրադիր հատվածում նկատվում են մի մեծ, առանձնացված կառույցի, հնարավոր է՝ դղյակի կիկլոպյան պատերը: Առանձին շինությունների պատեր նկատվում են միջնաբերդի ներսում, գերազանցապես պարսպին կից: Միջնաբերդի կենտրոնում կանգնած է մնացել մի ցից ժայռագանգված, որը, հնարավոր է, ծառայել է ծիսական արարողությունների համար: Միջնաբերդի հարավային կողմի թամբաձև իջվածքում եղել է բնակավայրը, որը գրեթե հիմնովին ավերվել է անցյալ տարի կառուցված էլեկտրակայանի ջրագիծն անցկացնելու ընթացքում: Վերգետնյա նյութը վկայում է, որ ամրոցը շարունակել է գոյություն ունենալ նաև վաղ երկաթի և երկաթի լայն տարածման դարաշրջաններում: Հակ գյուղի մոտ փաստագրվել է ևս մի ամրոց, որի դաշտային հետազոտությունը դեռ առջևում է:

Հակ-Եզնագոմեր-Արվականյան հանգույցը չափազանց նպաստավոր բնական պայմաններ ունի: Լեռներով ու ձորերով շրջափակված բարձրավանդակը կատարյալ պայմաններ էր ստեղծում երկրագործության և անասնապահության զարգացման համար: Հավանաբար, հենց այս տեսակետից կարելի է մեկնաբանել այսպես կոչված «միջանցքը»: «Միջանցք» պայմանական անվանմամբ կոչել ենք մարդու կողմից ամրացված ժայռային կազմավորումները, որոնք գտնվում են Եզնագոմեր գյուղից 4 կմ արևմուտք, Եզնագոմերի ամրոցից 3,1 կմ հս-արմ, սելավատարներով կտրատված անտառազուրկ ալպյան մարգագետիններում: Վերջինս ժայռագծի գագաթի երկատված բնական կազմավորում է, որը երկրակեղևի մակերեսում արտահայտվում է միմյանց զուգահեռ գնացող երկարաձիգ, մինչև 3-4 մ բարձրությամբ մնացած ժայռագծերով: Նրանք քայքայվելով վերածվել են իրարից 15-20 մ հեռավորությամբ զուգահեռ թափված քարակույտերի գծերի: «Միջանցքը» ոլորաններով գնում է մոտ 0,5 կմ, տեղ-տեղ կտրվելով սելավատարներով: Իր ընթացքի ամբողջ երկարությամբ նրա երկայնական եզրագծերը ամրացված են ակնհայտորեն ձեռակերտ, չոր շարվածքով դրված կիկլոպյան շարք հիշեցնող պարիսպներով, որոնք ունեն դեպի դուրս բացվող, երկու կողմերից պատերով ուղղորդվող մուտքեր: «Միջանցքի» ընդլայնական եզրագծերը փակված են նմանատիպ շարվածքներով պատերով, իսկ ներսի ներփակ տարածությունը պատաշարերով բաժանվում է մի քանի առանձնացված հատվածների, կազմելով բազմասեկցիոն պաշտպանված կառույցներ, որոնց գործառույթն, ըստ ամենայնի, մեծաքանակ անասնապահության գիշերումն ապահովելն էր: Շրջակայքում տարածվում է բնդարձակ, ըստ ամենայնի, տոհմական դամբանադաշտ՝ բաղկացած բարձունքին դրված մեծ դամբարանաբլուրներից. նրա շուրջը խմբավորված են փոքր, կրոնիկներով փակվող թաղումներ: «Միջանցքի» և Եզնագոմերի ամրոցի միջև գնում է մոտ 2 կմ երկարությամբ, բլուրների ջրբաժան գծերով ընթացող, նույն կիկլոպյան շարվածքով կա-

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Զ (ԺԲ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 1 (45) ԽՈՒՎԱՐ-ՄԱՐՏ, 2014  
ՎԷՆ ԽԱՆՈՒՄԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒՄ



ռուցված քարե ցանկապատ, որին կցված են բազմաթիվ կլորացող, ուղղանկյուն, տձև տարածություններ ներփակող պատաշարեր: Նկարագրված կառույցներն ակնհայտորեն յայլադային անասնապահական կենսակերպ ունեցողների մշակույթի արգասիք են: Կառուցման տեխնիկան նմանվում է Եզնագոմերի ամրոցին և, ըստ ամենայնի, ժամանակակից է նրան: Կիկլոպյան ամրոցների հիմնական գործառույթներից էր ամառային արոտավայրերի պաշտպանությունը: Բացի այդ, հազվադեպ չէին ամրոցները, որոնք հանդես էին գալիս միայն որպես ամառանոց, օրինակ՝ Խորտամրոց ամրոցը Վահան-Արծվաշեն ճանապարհին, Բարձրաբերդ ամրոցը Աջաջուր, Սևքար և Սարիգյուղ ճանապարհների խաչմերուկում: Իսկ Թաշ-գաշ ամրոցը Նոյեմբերյանում, ըստ Ս. Եսայանի, միայն փարախ էր<sup>36</sup>: Այս իմաստով, ամրոցի և պաշտպանված փարախի հարևանությունը բնական է: Փարախների ընդգրկումը պաշտպանական գծի մեջ հազվադեպ չէ տարբեր տարածաշրջաններում՝ վաղ պետականության ձևավորման փուլում<sup>37</sup>:



Նկ. 4: «Միջանցք» ամրացված փարախից մի հատված

Եւս մեկ բնակավայր գտնվում է Արվականից հարավ-արևելք, Ֆունդուխի տեղամասում<sup>38</sup>: Արվականի տարածքը նաև ուղիղ տեսողական կապի մեջ է գտնվում Հոչանցի հովտում գտնվող Նորաբերդ ամրոցի հետ (ձախափնյա Քարաշանլու գյուղի մոտ), որտեղից հայտնաբերված խեցեղենի մեջ աննշան քանակ է կազմում երկաթի լայն տարածման ժամա-

36 Տե՛ս Ս. Ա. Есаян. Древняя культура..., с. 36, 168, 251.

37 Տե՛ս Ж.-Л. Брюно. Галлы. М., 2011, с. 95-101; Н. Я. Мерперт. Археология библейских стран. М., 1998, с. 198

38 Տե՛ս В. А. Алиев. Исследования в Лачинском районе, с. 414-415.

նակաշրջանին բնորոշ խեցեղենը<sup>39</sup>:

Տարածաշրջանի խիտ բնակեցման մասին են վկայում այստեղ տեղաբաշխված դամբանադաշտերը: Ընդարձակ դամբանադաշտեր են հաստատագրված Սիսիանի գորավարժարանից մոտ 6 կմ արևելք դեպի Հակ տանող ճանապարհի աջ և ձախ կողմերում: Եւս մեկ դամբանադաշտ, որտեղ հավաստված է վաղ երկաթին բնորոշ վերգետնյա նյութ, գտնվում է Հակից մոտ 1 կմ հյուսիս<sup>40</sup>: Ընդարձակ դամբանադաշտեր հաստատագրված են Սպիտակաջուր, Արվական, Եզնագոմեր գյուղերի տարածքում, Արվական-Եզնագոմեր ճանապարհին<sup>41</sup>:

Այսպիսով, Սպիտակաջուր-Եզնագոմեր-Հակ-Արվական հատվածում մ. թ. ա. II հազ. ձևավորվում է բնակատեղիների յուրատեսակ ագլոմերացիա, որն ընդգրկում է ինչպես ամրոցներ, այնպես էլ բաց բնակավայրեր:

Այս հանգույցը կարևոր դեր է կատարել նաև միջնադարում: Մասնավորապես, օգտագործվել է Սպիտակաջրի ամրոցի նպաստավոր ռազմավարական դիրքը. ամրոցի տարածքում կառուցվել է Կատոսավանքի հետ ուղիղ տեսողական կապի մեջ գտնվող մատուռ: Ամրոցի միջնադարյան բոլոր շինությունները կառուցվել են կրաշաղախով՝ հին, բրոնզեդարյան ամրոցի պարիսպների քարերից՝ կոտրատելով ու փոքրացնելով դրանք: Միջնադարյան գյուղատեղին օգտագործել է հին պատերն ու պարիսպները, կցել է նրանց ավելի փոքր քարերից շարված պատեր ու սենյակներ: Միջնաբերդում այսօր էլ երևում են երկու, մոտ 2 մ խորությամբ ու 1,5 մ տրամագծով, ներսից քարերով շարված միջնադարյան տնտեսական հորեր:

Սպիտակաջուր գյուղի տարածքում տեղադրված էր նաև ընդարձակ գյուղատեղի: Միջնադարում գոյություն են ունեցել նաև Ավագահանքի բնակավայրը՝ Եզնագոմերի մոտակայքում (ՔԵԹ ի/հ 23,27, 35-36, 42, 46-49, 51, 53-54, 56-69, 151, 158/2), Արվականը, Հակը<sup>42</sup>:

Մ. թ. ա. II-I հազ. հուշարձաններ հաստատագրված են նաև Հերիկ գյուղի շրջակայքում: Հերիկից հայտնի հնագիտական նյութը բնորոշ է մ. թ. ա. I հազ. երկրորդ-երրորդ քառորդներին (ՔԵԹ ի/հ 112/7, 123/7): 2013 թ. հետազոտությունները թույլ տվեցին վկայագրել նաև Հերիկի կիլ-լոպյան ամրոցը (N 39 41 07,6 E. 46 16 41,9 Alt. 1805): Այս տարածքում ամրոցի գոյության մասին նշում է դեռևս **Ղ. Ալիշանը**<sup>43</sup>: Ամրոցը հայտնաբերվել ու փաստագրվել է նույնանուն գյուղի արևմտյան եզրին բարձրացող բլրի գագաթին: Բլրի գոգավոր գագաթը ներառված է հատակագծում ձվաձևին մոտեցող շրջապարսպով, շարված մեծածավալ քարերից չոր, կիկլոպյան շարվածքով: Պարսպագիծը դժվար է ուրվագծվում,

39 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան, Ա. Թադևոսյան, Հնագիտական հետազոտություններ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, էջ 47:

40 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 55:

41 Տե՛ս ՔԵԹ ի/հ 1-21, 134-135, 146-149/1 Արվականի N 1 դամբարան, 72-73/1 N 2 դամբարան, 103-108/4՝ Սպիտակաջրի ավերված դամբարան: Հմմտ. Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 55-57; **В. А. Алиев**, նշվ. աշխ., էջ 414:

42 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 55: Աղահեջք գավառի միջնադարյան բնակավայրերի տեղորոշման տարբերակների մասին տե՛ս Ա. Յակոբեան, Հակարիի վերնահովտի նորայայտ վիճագրերը, «Հանդէս ամսօրեայ», 1998, թիւ 1-12, էջ 269-279, 323; **А. Карагезян**. К локализации гавара Кашатаг. «Լրարեր հաս. գիտ.», 1987, N 1, էջ 41-44:

43 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 265-271:



Նկ. 5: «Աղվեսահակի»-ի ամրոցանիստ հրվանդանը հյուսիսից

քանի որ պահպանվել է մեկ քարի բարձրությամբ և ընթացքի զգալի մասում պատված լինելով հողածածկույթով, երևում է հատվածաբար: Պարսպաշարի արևելյան կողմում հստակ նկատվում է ամրոցի գլխավոր մուտքը: Այն պարսպագծի մոտ երկու մետրանոց բացվածք է՝ երկու կողմերից եզերված միակտոր մեծ քարերով: Պարսպագծի ներսում նկատվում են երբեմնի կառուցապատումից մնացած առանձին պատերի հետքեր: Ներսի գոգավորության գագաթին նշմարվում են մեծ, բազմասեկցիոն շինության՝ հավանաբար, միջնաբերդի կամ դղյակի հետքերը: Ամրոցի հարավային լանջին պահպանվել է հնում կողոպտված և «կեղծ թաղ»-ով ծածկված մեծ քարարկղային դամբարանախուց: Տարածքում վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել, սակայն, ըստ ամենայնի, հուշարձանը պետք թվագրել ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով: Հարկ է նշել, որ Հերիկի ամրոցը նույնպես տեղադրված է ներկայիս Սյունիքի մարզից եկող ճանապարհներից մեկի՝ Խոզնավարի ճանապարհի ճյուղավորումներից մեկի վրա: Բացի այդ, բացառված չէ, որ Հերիկի ամրոցի առաջացման պարագայում որոշակի դեր է խաղացել հանքային ջրերի առկայությունը: Հերիկի ամրոցը փաստորեն հանդիսանում է եզնագոմերյան ագլոմերացիայի ծայր հարավարևելյան կետը:

2013 թ. հետազոտությունների արդյունքում ուշագրավ կիկլոպյան ամրոց է հաստատագրվել նաև Միրիկ գյուղի տարածքում: Այն գտնվում է Միրիկի արևմտյան եզրին բարձրացող, Սյունյաց բարձրավանդակից իջնող և Աղավտ գետի աջ ափին հանգչող երկար լեռնաբազկի ծայր արևմտյան եզրին: Բլրի գագաթին տեղադրված է միջնաբերդը, իսկ բուն բնակատեղին տարածվում է բարձունքի հարավային լանջին՝ հասնելով



մինչև Միրիկ գյուղի եզրը: Միջնաբերդի ընդհանուր երկարությունը մոտ 200 մ է, լայնությունը՝ 30-50 մ: Այն զբաղեցնում է բլրի գագաթը և նրա հիմնական՝ արևելյան հատվածը, տեղադրված է ամենաբարձր, արհեստականորեն հարթեցված, հատակագծում էլիպսաձև 80×50 մ չափերով տափարակի վրա և բոլոր կողմերից պաշտպանված է մեծածավալ ձեռքած, անմշակ բազալտե ժայռաբեկորներից չոր շարվածքով դրված կիլոլայյան պարսպով: Արհեստականորեն հարթեցված հարթակներն այնքան էլ հազվադեպ չեն Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի ամրոցներում<sup>44</sup>: Այս հատվածին է միանում միջնաբերդ եկող ճանապարհը, որը գալիս է միջնաբերդի հարավային պարսպագծի տակով, մեկ դարավանդ ներքև, և գնալով մոտ 150 մ՝ մտնում է հիմնական հատված երկու կողմերից պատերով եզերված կարճ միջանցքով: Նման հնարք օգտագործված է Էլառում<sup>45</sup>: Միջնաբերդի կենտրոնական հատվածի արևմտյան կողմում դրված է 7-8 մ տրամագծով կլոր աշտարակ, որի պատի հաստությունը 3 մ է: Այն կազմում է միջնաբերդի դոյակի արևմտյան եզրամասը: Դոյակը զբաղեցնում է միջնաբերդի հիմնական հատվածի արևմտյան կողմը և արտահայտվում է կողքի վրա ցից կանգած քարերից շարված պատերով կազմված մի բազմասենյականոց համալիրով: Վերջինիս դիմաց արևելքից բացվում է բաց հրապարակ: Կենտրոնական հատվածից դեպի արևմուտք տանում է մոտ 30 մ երկարությամբ,

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 1 (45) ԽՈՒՄԱՐ-ՄԱՐԿ, 2014

ՀԱՄԱՆԱԿՎԱԿԱՆ ԽԱՆՈՒՆ

ՎԵՐ



Նկ. 6. Միրիկի ամրոցի ընդհանուր տեսքը արևելքից

պարիսպներով պաշտպանված տարածք, որն ավարտվում է մեծ, մոտ 15×20 մ չափերով ուղղանկյուն հզոր աշտարակով, որը, պայմանականորեն, «գիկուրատ» ենք անվանում: Այն կառուցված է նույն կիլոլայյան շար-

44 Հմմ. «Հայկական ճարտարապետության պատմություն», հատ. 1, Եր., 1996, էջ 78:  
45 Տե՛ս Է. Խանգաղյան, Էլառ-Դարանի, Եր., 1979, էջ 12:





Նկ. 7: Միրիկի ամրոցի դարավանդի հենապատը

վածքով, պահպանվել է մինչև 3-4 մ բարձրությամբ, իսկ պատերի լայնությունը 2,5 մ է: Աշտարակին արևմուտքից կցված է ոչ մեծ սենյակ, որի մուտքը բացվում է դեպի միջնաբերդի կենտրոնական հատված տանող ճանապարհը: Ամրոցանիստ բլրի հարավային գառիթափ լանջը պատված է պարիսպ-հենապատերով կազմակերպված բազմաթիվ արհեստական դարավանդներով, որոնց վրա պահպանված կառուցապատման հետքերը հուշում են, որ այստեղ է եղել բուն բնակավայրը: Հենապատերը շարված են նույն տեխնիկայով և պահպանվել են մինչև 5 մ բարձրությամբ: Ամրացված դարավանդների կառուցումը հաստատագրված է Սամնաղբյուր և Հառիձ ամրոցներում՝ Հառիձ, Վաղաշենում՝ Սևանի ավազան, Ծաղկահովտում՝ Արագածոտն<sup>46</sup>: Հարավային լանջի արհեստական դարավանդներից մեկում բացվում է միջնաբերդի ստորգետնյա մուտքը: Այն իրենից ներկայացնում է երեք միակտոր քարերից դրված 1x1 մ չափերով մուտք, որն իջնելով մոտ 3-4 մ՝ փակվում է փլուզվածքներով: Մուտքն, ամենայն հավանականությամբ, քողարկված է եղել դիմացը ընկած մեծ տափակ սալով: Բնակատեղիից ներքև տարածվել է դամբանադաշտը, որի հետքերը մակերեսին վերացվել են, բայց ցայտուն երևում են բլրի ստորոտով անցկացված ջրատարի խրամատի կտրվածքում: Ամրոցից և կիսավեր դամբարաններից հայտնաբերված խեցեղենը վերաբերում է նաև վաղ երկաթի դարաշրջանին: Տարածքում գոյություն ունենալ են Միրիկ-2

46 Տե՛ս «Հայկական ճարտարապետության պատմություն», հատ. I, էջ 74, 82-83; **T. C. Xaчaчpян.** Древняя культура Ширака. Ер., 1975, с. 34-35; **R. Bischone, S. Hmayakyan, N. Parmegiani, Yu. Sayadyan.** Description of the Stes. The North-Eastern frontier..., p. 163; **P. Avetisyan, R. Badalyan, A. Smith.** A Preliminary Report on the 1998 Archaeological investigations of Project ArAGATS in the Tsakhkahovit Plain, Armenia. Studi Micenei ed Anatolici. Fasc. XLII/I. Roma, 2000, p.34.

ամրոցը, որն առայժմ տեղում ուսումնասիրված չէ:

Հուշարձանների հաջորդ կարևոր հանգույցը տարածվում է Տանձուտ և Ղուշչի գյուղերի հատվածում: Այն գտնվում է Խոզնավարից եկող և Բերձոր-Եզնագոմեր ճանապարհների խաչմերուկում և տարածվում է Աղավնո գետի երկու ափերին: Աղավնոյի աջ ափի հուշարձանները ներկայացված են Ղուշչիի երկու ամրոցներով և Ղալաջիկի ամրոցով: Գետի աջ ափին կենտրոնական դիրքը, ամենայն հավանականությամբ, զբաղեցնում էր Ղուշչի ղալա ամրոցը (N 39 40 05,3 E.46 21 27,1 Alt. 1503), որն առայժմ տեղում չի ուսումնասիրվել: Նրան մոտակա Ղուշչի-1 ամրոցը (N 39 40 22,4 E. 46 21 22,0 Alt. 1458) հանդիսանում էր փոքր պահակային ամրոց, որ նստած է ներկայումս անբնակ Ղուշչի գյուղի արևելյան եզրին բարձրացող և շրջակայքի ու Աղավնոյի գետահովտի վրա գերիշխող ցից ժայռածերպի հարթ գագաթին: Հս-արմ, հվ-արլ ուղղվածությամբ ժայռագագաթը հարավից ու արևելքից եզերվում է ուղղահայաց կտրվող բազալտե անմատչելի ստավակտիտային ծերպերով, մյուս կողմերից՝ մեծ թեքությամբ իջնող զառիթափ լանջերով: Ամրոցի միջնաբերդը զբաղեցնում է 30×50 մ տարածք, որի հյուսիսային եզրագծով գնում է անմշակ մեծ ժայռաբեկորներից շարված կիկլոպյան պարսպագիծը: Այստեղ նկատվում է նման շարվածքով ընդլայնական դրված պատ, որը բաժանում է գագաթի պաշտպանված մակերեսը երկու առանձնացված հատվածների: Հատվածներից յուրաքանչյուրում պահպանվել են մոտ 3 մ տրամագծով ակնհայտորեն ձեռակերտ փոսեր, հավանաբար, ջրավազաններ: Ամրոցի արևմտյան եզրամասը պաշտպանված է նաև մանր քարերից կրաշաղախով շարված պարսպով, ինչը վկայում է, որ այս դիտակետ-ամրոցը օգտագործվել է նաև միջնադարում: Նմանատիպ պահակակետ ամրոցները հազվադեպ չեն Հայկական լեռնաշխարհում: Որպես օրինակ կարելի է մատնանշել Սառնաղբյուրի ամրոցը մի քանի պահակակետերով: Նմանատիպ ամրոցներ էին նաև Դվոր, Գեղամասար և այլ բնակավայրերը: Այդ ամրությունները կատարում էին, ամենայն հավանականությամբ, միայն հենակետային գործառույթներ և չունեին մշտական բնակչություն<sup>47</sup>:

Ղուշչի-Տանձուտյան հանգույցի հաջորդ խոշոր ամրոցը Ղալաջիկն է (N 39 39 49,2 E. 46 21 45,7 Alt. 1470): Այն գտնվում է Տանձուտ գյուղից մոտ 2 կմ հարավ-արևմուտք, Աղավնո գետի և նրա աջակողմյան Սթունիս վտակի միախառնման կետից մոտ 1 կմ հարավ ընկած ամենաբարձր՝ Ղալաջիկ բլրի գագաթին, Ղուշչի ղալա բլրագագաթի (ամրոցի) դիմաց: Բլրի կոնաձև գագաթը ներփակվում է 100-120 մ տրամագծով եզերված հիմնական պարսպով, որը շարված է մեծ, ձեղքած քարերից չոր շարվածքով: Շրջապարիսպն իր ընթացքի զգալի մասում նստած է բնական ժայռագծի վրա և կանգուն է մինչև 1,5-2 մ բարձրությունը: Բլրի գագաթին տեղադրված միջնաբերդը ևս ամրացված է շրջապարսպով, որը երևում է հատվածներով: Միջնաբերդի և հիմնական պարսպի միջև առաջացած կլոր, ժապավենաձև տարածքը մասամբ արհեստականորեն հարթեցված է և կառուցապատված բազմաթիվ շինություններով: Սթունիս գետակի

47 Հմմ. «Հայկական ճարտարապետության պատմություն», հատ. I, էջ 72-73; R. Bischoe, S. Hmayakyan, N. Parmegiani, Yu. Sayadyan, նշվ. աշխ., էջ 62, 225 և այլք:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
Զ (ԺԲ) ԳՐԱԹԻ, ԹԻՎ 1 (45) ԽՈՒՄԱՐ-ՄԱՐՏ, 2014  
ՎԷՄ ԽԱՄԱԿԱՅՎԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ



Նկ. 8: Տանձուտ գյուղի շրջակայքի ամրոցները

ավազանից դեպի ամրոց է բարձրանում ցից քարերով եզերված ճանապարհ, որը լավ է պահպանվել հարավային ստորոտում: Ամրացված ճանապարհներ վկայված են Քանազեղում՝ Սևանի ավազան և Խորտամբոցում՝ Տավուշ<sup>48</sup>:

Աղավնոյի ձախ ափին կենտրոնական դիրք զբաղեցնում է «Տանձուտ 1» ամրոցը (N 39 40 26,3 E. 46 22 35,0 Alt. 1513): Այն գտնվում է Տանձուտ գյուղի հյուսիսարևմտյան եզրին, Աղավնո գետի ձախ ափին վեր խոյացող երկգագաթ մեծ ու փոքր, կոնաձև բլուրների վրա: Ամրոցանիստ բլուրները տեղադրված են Աղավնո գետին աջից միացող Սթունիս գետակի դիմաց, որտեղից պարզ դիտարկվում են ոչ միայն Սթունիսի և Աղավնոյի հովիտները, այլև հանդիպակաց ափին գտնվող Ղալաջիկ, Ղուշի դալա և Ղուշի-1 ամրոցները:

Տանձուտ-1 ամրոցը բազմաձև է ամենաբարձր բլրին, իսկ նրա հարավարևելքում գտնվող փոքր բլրի գագաթին նկատվում են դիտակետ-աշտարակի հետքերը: Փոքր բլուր կարելի է անցնել մեծից իջնող ջրբաժանով: Մեծ բլուրը հյուսիսային բարձրավանդակից բաժանվում է թամբաձև գոգավորությամբ, որտեղից ամրոց բարձրանալու ճանապարհին դրված է մեծ ձեղքած քարերից կիկլոպյան շարվածքով կառուցված պարսպագիծ: Պարիսպը հստակ երևում է բլրի հյուսիսային լանջի միջնամասում, իսկ արևմտյան և հարավային լանջերին, որոնք շատ ավելի զառիթափ են, այն, ըստ ամենայնի, չի պահպանվել: Շինության հետքեր կան նաև մեծ բլրի գագաթին, որոնք, սակայն, շատ վատ են պահպանվել: Ամրոցից դեպի հյուսիս բարձրացող լեռնաբազկի գագաթնագծին տեղակայված է մ. թ. ա. II-I հազ., գրեթե հիմնովին կողոպտված, մոտ 1 կմ ձգվող դամբանադաշտը: Բնակատեղիի և դամբանադաշտի հետքեր հայտնաբերվել են նաև Տանձուտ-Միշաթաղ ճանապարհի աջ կողմում: Եւս մեկ խոշոր դամբանադաշտ տեղադրված է Ղալաջիկ ամրոցի մոտակայքում: Դամբարանները ներկայացված են քարահողային դամբանաբլուրներով, որոնք

48 Տե՛ս **Գ. Միրայեյան**, Սևանա ավազանի կիկլոպյան ամրոցները, Եր., 1968, էջ 23; **С. А. Есян**. Древняя культура..., с. 35.

ծածկում էին հսկայական, մինչև 10 քառ. մ տարածքով դամբանասարահները՝ ծածկված կեղծ թաղով: Դամբարանների մեծ մասն ավերված և թալանված են: Թալանված խցերից հավաքված խեցեղեն նյութը բնորոշում է դրանք որպես մ. թ. ա. VIII-VI դդ. թաղումներ:

Ղուշչի-Տանձուտյան հանգույցի խիտ բնակեցումը, բնականաբար, սերտ կապ էր ենթադրում Խոզնավարի տարածքի հետ: Դամբանադաշտեր են հայտնաբերված Խոզնավարից 500 մ հյուսիս-արևմուտք գտնվող Բազարխանա տեղամասում, ինչպես նաև Խոզնավար-Ղուշչի հատվածում: Բազարխանայում հայտնաբերվել է նաև սրբատեղի և գոհասեղան<sup>49</sup>:

Ղուշչի-Տանձուտյան հանգույցը շարունակել է գոյատևել նաև միջնադարում՝ կազմելով Սյունիքի Աղահեջք գավառի պաշտպանական գծի մի հատվածը: Միջնադարում որոշակի վերակառուցումների է ենթարկվել Ղուշչիի պահակակետը: Այստեղ գագաթագծից 15-20 մ հեռավորության վրա հյուսիսային լանջի վերնամասի եզրագծով կառուցվել է 40-50 մ երկարությամբ մանր, տափակ, ճեղքած քարերից կրաշաղախով շարված պարսպագիծ: Հայտնաբերվել է նաև սակավաքանակ խեցեղեն նյութ:

Փակագծում նշենք նաև, որ Սթունիս աջ վտակի միջնահովտում գտնվող նույնանուն, ներկայումս անբնակ գյուղի մեջ կանգուն է իր ճարտարապետությամբ հարևան աղահեջքյան բնակավայրերում XVII դարում կառուցված եռանավ բազիլիկ հորինվածքով հոգևոր շինություններին խիստ նման մի եկեղեցի, որի նկարագրությունը բացակայում է Քաշաթաղի շրջանի հուշարձաններին նվիրված աշխատանքներում<sup>50</sup>: Այս եկեղեցու ներսի սյուներից մեկի և նրա խոյակի վրա կա քառատող (եթե ոչ ավելի) ուշագրավ վիմագիր, որի միջնամասի տառերը հստակ ընթերցվում են (խոյակին՝ երևացող 2-րդ տողն է, նրա քիվատակին՝ 3-րդը, իսկ նախորդ և հաջորդ տողերը ծածկված են կրաներկի հաստ շերտով): Ընթերցվող հատվածի վերծանությունն է. «... / ԵՂԲԱՐՆ Հ[ԱՅ]Կ[Ա]Զ[Ի]Ն ԵԻ ԿՈՂ[Ա]ԿԻ/ՑՆ Մ[Ա]ՀՓ[Ա]Ր[Ի]Ն Յ[Ի]Շ/...»: Այստեղ հիշված՝ այլուստ անհայտ (!) **Մահփար-Մահփարի** իշխանուհու<sup>51</sup> անուսինը, ամենայն հավանականությամբ, Մելիք-Հայկազ Բ-ի (Մեծի) միակ եղբայրն էր, որի անունն **Աղաջան** էր՝ ըստ 1606 թ. ոչ վաղ գրված մի հիշատակարանի<sup>52</sup>: Իհարկե, լավ կլիներ կրաներկը շուտով լվանալ և փորձել ընթերցել ամբողջ բնագիրը (իշխանի անվանաձևով, թվականով, եկեղեցու կամ գյուղի անունով, եթե դրանք կան):

Եւս մեկ խոշոր ամրոց տեղադրված է Աղավնո գետի ձախ ափին (N 39 40 57,6 E. 46 22 04,5 Alt. 1500): Այն գտնվում է Տանձուտ գյուղից 1,2 կմ հյուսիս-արևմուտք, Աղավնոյի ձախակողմյան փոքր վտակի աջ ափին, ղեպի Սոնասար տանող ճանապարհի սկզբնամասում գտնվող ժայռափոր

49 Տե՛ս **Օ. Մոկիկյան**, նշվ. աշխ., էջ 92-93; **Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Է. Այվազյան, Է. Քամայան, Գ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 130:

50 Հմմ. **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 139: Այս աշխատանքում նշված է միայն Սթունիսի մոտակայքում գտնվող՝ ավելի վաղ դարաշրջանի, «անմշակ և կիսամշակ քարով» 120-125 սմ հաստ պատերով միանավ բազիլիկը:

51 **Մահփարի** անունով մեկ այլ աղահեջքյան իշխանուհու մասին (Մելիք Հախնազար Բ-ի տիկնոջ՝ 1680-1690-ական թթ.) տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտություններ (Արցախ և Ուտիք), էջ 386-387:

52 Տե՛ս նույն տեղում, էջ 386, ծնթ. 119:

բնակավայրի վերևի հարթ հրվանդանին: Ամրոցանիստ հրվանդանը երկու կողմերից եզերվում է բնական անմատչելի ժայռածեղպերով և միայն հյուսիսային ու արևելյան կողմերից ունի ձեռակերտ ամրություններ: Ամրոցի հյուսիսային, ամենամատչելի ուղղությունը փակված է մեծ ուղղանկյուն աշտարակով: Այն կառուցված է խորանարդաձև զանգվածեղ ժայռաբեկորներից, առանց կրաշաղախի: Արևելյան կողմից բնակելի հարթակը պաշտպանված է մոտ 100 մ երկարությամբ և մինչև 3,0 մ բարձրությամբ պահպանված պարսպագծով: Այն ևս շարված է ոչ կիկլոպյան տեխնիկայով, բայց մեծածավալ, կոպտատաշ քարերով, կավահողային շաղախով: Դատելով շարվածքից՝ ամրոցը վաղ միջնադարյան է: Նմանատիպ կառուցվածքն ունի բազմաթիվ զուգահեռներ Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում<sup>53</sup>: Պարսպի առջևից անցնում է ամրոց մտնող հիմնական ճանապարհի հենապատը: Այն մտնում է ամրոց արևելյան պարսպագծի միջնամասում բացված մոտ 3 մ լայնությամբ միջանցքանման մուտքով: Ներսում նկատվում են առանձին շինությունների հետքեր և պատեր: Ամրոցի մոտավոր չափերն են՝ 120×80 մ:

Դատելով չափերից և տարածքում գերիշխող դիրքից՝ թվում է, թե չի կարելի բացառել, որ այս ամրոցը եղած լիներ պատմական Խոժոռաբերդը՝ Աղահեջք գավառի երկու խոշորագույն ամրություններից մեկը, որի անունով երբեմն անվանվում էր նաև ողջ գավառը (ինչպես XIII դարում նշում էր Ստեփանոս Օրբելյանը)<sup>54</sup>: Նշենք, որ ներկայացված տեղորոշումը **Ա. Հակոբյանին** է: **Ա. Կարագյոզյանի** կարծիքով՝ այս ամրոցն ավելի շուտ կարելի է նույնացնել Օրբելյանի հիշատակած Քաշաթաղքի հետ, իսկ Խոժոռաբերդը կարելի է տեղադրել Հոչանցի հովտում և նույնացնել **Վ. Ալինի** կողմից Մշենիի մոտակայքում (դիմաց) նշված «Գյավուր դալայի» (Նորաբերդ) հետ<sup>55</sup>: Մինչդեռ **Ա. Հակոբյանը** հենց Քաշաթաղք գյուղն է տեղորոշում Մշենիում, որպես նրա ստորին, ժայռափոր տներով թաղամասը<sup>56</sup>:

Հուշարձանների երրորդ հանգույցը ներկայացված է Արահուծ և Ծիծեռնավանք գյուղերի շրջակայքում գտնվող հուշարձաններով: Դրանցից առաջինը՝ Մուլար-կուզե ամրոցը, գտնվում է Արահուծ գյուղից մոտ 1 կմ հարավ-արևմուտք, Աղավնո գետի Խնածախ վտակի աջ ափին բարձրացող բլրի գագաթի հարավահայաց լանջին՝ դեպի ՀՀ Սյունիքի մարզի Խնածախ գյուղ տանող ճանապարհի խաչմերուկին (N 39 37 15,0 E. 46 25

53 Տե՛ս **Ե. Ասատրյան**, Թալինի շրջանի հուշարձանները, Եր., 2002, էջ 40, 45:

54 Տե՛ս **Ստեփաննոսի Մինեաց Եպիսկոպոսի** Պատմութիւն տանն Սիսական, Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, գլ. Բ, էջ 6-7; Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ **Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի** Մինեաց, Թիֆլիս, 1910, էջ 12-13; **Ստեփաննոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմ., ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 70-71, 416: Հմմ. **Հ. Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 266; **Լեո**, Հայոց պատմութիւն, «Երկերի ժողովածու», հատ. I, Եր., 1966, էջ 159; **Ս. Տ. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 32; **Թ. Հակոբյան**, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Եր., 1966, էջ 209; **Մ. Յովհաննիսեան**, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1972, էջ 432; **Բ. Հարությունյան**, Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմա-աշխարհագրական դիտարկումներ), «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 3, էջ 130:

55 Տե՛ս **Ա. Karagezian**, նշվ. աշխ., էջ 41, 44:

56 Տե՛ս **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական և վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ և Ուտիք), էջ 144: Հմմ. **Ա. Գնունի, Գ. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 54:





Նկ. 9: «Խոժոռաբերդ» ամրոցը արևելքից



Նկ. 10: Մարդակերպ կոտրք «Ղալաջիկ 2» դամբանադաշտում

17,6 Alt. 1346): Ոչ մեծ ամրոց է՝ ամբողջովին եզերված շրջապարսպով: Պարիսպը լայնությամբ երկշերտ է՝ կառուցված միջին չափի անմշակ քարերից, ամրացված մանր քարերի ու կավահողի լցոնումով: Նմանատիպ հնարք օգտագործվել է Լճաշենում, Աղկալայից ոչ հեռու գտնվող պարս-

պաշարում<sup>57</sup>: Պահպանված բարձրությունը մինչև 1,5 մ է: Պարսպապատերի ներքում նկատվում են բազմաթիվ ուղղանկյուն ու կլորացող շինությունների պատեր: Հստակ նկատվում է ամրոցի արևելյան մուտքը՝ եզրված երկու մեծ քարերով: Ձորից դեպի ամրոց է բարձրանում մոտ 0,7 կմ ձգվող հին ճանապարհը, որը պահպանվել է շնորհիվ եզրագծով գնացող ցից քարերով շարված հենապատի: Ճանապարհը հասնելով բլրի գագաթի ջրբաժանին, անցնում է երկու կողմերից պատաշարերով ներփակված միջանցքով և տանում դեպի արևելյան մուտքը: Վերգետնյա նյութի և շինարարական տեխնիկայի համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ, հուշարձանը գոյատևել է վաղ երկաթի դարաշրջանից մինչև վաղ միջնադար: Ամենայն հավանականությամբ, Արահուծ-ծիծեռնավանքյան հանգույցի հաջորդ կարևոր կենտրոնը Ծիծեռնավանքի ամրոցն էր (N 37 37 54,2 E. 46 23 21,9 Alt. 1477), որը դեռևս տեղում ուսումնասիրված չէ:

Այս հանգույցը վերահսկում էր Խնածախ-Ծիծեռնավանք և Աղավնո-Եզնագոմեր ճանապարհները: Վերջին հանգամանքը հաստատվում է Դուզդաղի բնակատեղիի գոյությամբ (N 39 37 14,8 E. 46 27 12,7 Alt. 1030): Այն գտնվում է Արահուծ գյուղից մոտ 1 կմ արևելք, Աղավնո գետի և նրա աջակողմյան վտակի միախառնման կետում: Ընդարձակ հարթ մարգագետնի եզրին բարձրանում է միայնակ ժայռոտ բլուր, որի հարավային ու արևելյան ստորոտներում տարածվում է բնակատեղին: Բավականին արտահայտվում է վտակի երկայնքով երկու-երեք միմյանց զուգահեռ շարքերով գնացող պարսպագծերով, որոնք փակվում են բլրի ստորոտում: Վերջիններս լայնությամբ երկշերտ երկարաձիգ պատաշարեր են և պահպանվել են մեկ քարի բարձրությամբ: Շարվածքը հիմնականում օրտոտատ է՝ կողքի վրա ցից կանգնած քարերով, ներսը՝ քարահողային լցունումով: Բլրի գագաթը, ըստ ամենայնի, օգտագործվել է որպես դիտակետ, որը վերահսկում էր Աղավնոյի ձորը մի քանի կմ երկարությամբ և որտեղից գտնվել է վաղ երկաթին բնորոշ խեցեղեն: Խորհրդային տարիներին հուշարձանի տարածքում եղել է անասնաֆերմա և այն հերկվում էր: Արդյունքում բնակավայրի արևմտյան մասը ավերված է, իսկ պարիսպների միջնամասում շինությունների հետքեր չեն պահպանվել:

Տարածքում հայտնաբերված են նաև այլ բնակատեղիների և դամբանադաշտերի հետքեր: Մասնավորապես, Տեղ-Բերձոր և Աղավնո-Եզնագոմեր ճանապարհների խաչմերուկից գրեթե անմիջապես դեպի հյուսիս-արևելք դիտարկվում են բնակատեղիի հետքեր (Աղավնո-1, պատմական **Շարակի**): Աղավնո գյուղից պատահականորեն գտնված մ. թ. ա. I հազ. բնորոշ նյութը պահպանվում է նաև Քաշաթաղի երկրագիտական թանգարանում (ՔԵԹ 136/15): Աղավնո-1-ից հայտնաբերված խեցեղեն նյութը բնորոշ է մ. թ. ա. VIII-VI դդ.: Այդ բնակավայրի հաստատագրումը թույլ է տալիս ենթադրել, որ տվյալ հանգույցը այս կամ այն ձևով կապված էր Տեղ-Բերձոր ճանապարհի հետ:

Տարածքում տեղադրված են նաև դամբարաններ: Այսպես, Սիլարկուզե հնավայրի տարածքում գագաթին գտնվում է մեծ կոնաձև դամ-

57 Տես Հ. Սանանյան, Լճաշենի բերդշենի կազմավորման փուլերը և պաշտպանական համակարգը, «Հուշարձան», Զ, էջ 46; Տես Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 21:



բանաբլուր, շուրջը՝ ևս երեք հատ: Եւս մեկ դամբանադաշտ վկայագրված է Աղավնո բնակատեղիի տարածքում (ՔԵԹ Ի/հ 129/15)<sup>58</sup>:

Այս հանգույցը բնականաբար իր նշանակությունը պահպանում է միջնադարի ընթացքում: Բնական է, միջնադարյան ժամանակաշրջանում այստեղ կենտրոնական դիրք զբաղեցնում էր Ծիծեռնավանքի համալիրը, որի ագլոմերացիայի մեջ էր մտնում նաև Աղավնո-1 բնակավայրը: Անկասկած, հենակետային դիրք էին զբաղեցնում նաև Մոլլար-կուզեի և Դուզդաղի բնակատեղիները, որոնցում նույնպես վկայագրված է զարգացած միջնադարին բնորոշ խեցեղեն: Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեն նաև գետի աջ և ձախ ափերին գտնվող քարանձավային կառույցները: Իրենց ճարտարապետական հորինվածքով նրանք հար և նման են Զանգեզուրի քարայրային համալիրներին (Գորիս, Խնձորեսկ, Տեղ, Քարահունջ, Խնածախ և այլն) և, դատելով վերգետնյա խեցեղեն նյութից, հանդես են գալիս, ամենայն հավանականությամբ, դեռևս զարգացած միջնադարից՝ XII-XIII դդ.:

Ամրոցների ծիծեռնավանքյան հանգույցը Նաբիուշաղի ձորակի միջոցով հաղորդակցվում է Խնածախի հուշարձանների հետ: Այստեղ կիկլոպյան ամրոց հաստատագրված է Խնածախից մոտ 1 կմ հարավ գտնվող Խաչի խութ և 2 կմ հյուսիս-արևելք գտնվող Բինա տեղամասերում, ինչպես նաև Վաղատուր (Բայանդուր)-Խնածախ ճանապարհին, Վաղատուրից 300 մ հարավ-արևելք «Կուձի դուզ» տեղամասում: Նշված երեք բնակատեղիներից հայտնաբերված նյութը (պեղումներ իրականացվել են միայն Խաչի խութ բնակատեղիում) բնորոշ է երկաթի լայն տարածման շրջափուլին<sup>59</sup>:

Նշված տարածքում առկա են նաև դամբանադաշտեր: Առավել վաղ շրջանի՝ մ. թ. ա. I հազ. բնորոշ նյութ հայտնաբերված է Խնածախի դամբանադաշտից<sup>60</sup>: Վաղատուր-Խնածախ, Խոզնավար-Մալիբեյ (Արահունծ) ճանապարհներին, Խնածախի Խաչի խութ և Բինա տեղամասերում, Տեղ գյուղում հայտնաբերված դամբարանների նյութը բնորոշ է մ. թ. ա. I հազ. երկրորդ-երրորդ քառորդներին<sup>61</sup>:

Բացի այդ, Խնածախից 3 կմ հյուսիս-արևելք գտնվող Վանքի ձոր տեղամասում հաստատագրված է սրբատեղի<sup>62</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

**առաջին՝** մ. թ. ա. II հազ. սկզբից Սյունիքի արևելյան շրջաններում ձևավորվել է առնվազն երեք պաշտպանական շրջան, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում էր իր մեջ մեկ կամ մի քանի ամրոց-բնակավայրեր, դիտակետեր կամ հենակետային ամրոցներ, ամրացված փարախներ և բաց բնակատեղիներ: Նմանատիպ խմբեր վկայված են Հայաստանի տար-

58 Տե՛ս Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 54:

59 Տե՛ս Օ. Ջոնկյան, նշվ. աշխ., էջ 90-91, 93, աղ. III; Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Է. Այվազյան, Է. Քամալյան, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 129:

60 Տե՛ս Օ. Ջոնկյան, նշվ. աշխ., էջ 50:

61 Տե՛ս Օ. Ջոնկյան, նշվ. աշխ., էջ 92-93; Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Է. Այվազյան, Է. Քամալյան, Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 130, 132:

62 Տե՛ս նույն տեղում:

բեր շրջաններում՝ Սևանա լճի ավազանում, Թալինում, Ծաղկահովտի շրջանում, Ապարանում, Շիրակում և այլն<sup>63</sup>:

**Երկրորդ՝** Աղավնոյի հովտում կարելի է զատել ամրացված կենտրոնների երեք խումբ. եզնագոմերյան, տանձուտյան և ծիծեռնավանքյան: Հարկ է նշել, որ այդ խմբերը մեկուսացած չեն, այլ հաղորդակցվում են առանձին ամրոցների (Հերիկ), կամ ամրոցների ավելի փոքր խմբերի (օրինակ՝ Միրիկյան խումբ) միջոցով: Դրանցից խոշորագույնը եզնագոմերյան հանգույցն է, ինչի հիմնական պատճառը այդ տարածքի կարևորագույն ռազմավարական դերն է. այստեղ հատվում են Միսիանի տարածաշրջանից դեպի Արցախ, ինչպես նաև Աղավնոյի ու Հոչանցի հովտով անցնող և եզնագոմեր-Արվական շրջանում միավորվող ճանապարհները: Բացի այդ, լեռնային ինքնահոս ոռոգվող լեռնադաշտը նպաստավոր պայմաններ էր ստեղծում գյուղատնտեսության զարգացման համար:

**Երրորդ՝** ամրացված կենտրոնները տեղադրված են Աղավնոյի գետահովիտը վերահսկող բլուրների գագաթներին, ընդ որում՝ ճանապարհների խաչմերուկներում, հիմնականում՝ Աղավնոյի վտակների հովիտներում. բնակավայրերը տեղադրված են խմբերով: Ճանապարհի վերահսկողությունը հանդիսանում էր պաշտպանական տեղանքի կազմակերպման կարևորագույն սկզբունքը, ինչը վկայված է Հայաստանի գրեթե բոլոր տարածաշրջաններում<sup>64</sup>:

**Չորրորդ՝** Այս պաշտպանական համակարգը շարունակել է գոյատևել նաև միջնադարում՝ հանդիսանալով Սյունյաց աշխարհի Աղահեջք գավառի պաշտպանական ամրությունների մի մասը:

**Գագիկ Մ. Սարգսյան** – աշխատում է Պատմական միջավայրի պահպանության և արգելոց թանգարանների ՊՈԱԿ-ում: Պեղել և մասնակցել է մի շարք կարևոր բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների պեղումներին: Վերջին տարիներին ղեկավարում է Կարկառ քաղաքի պեղումները ԼՂՀ-ում: Մասնակցել և ղեկավարել է մի շարք ուղեգծային հնագիտական արշավախմբեր Հայաստանում և Արցախում:

**Արտակ Վ. Գնունի** – աշխատում է ԵՊՀ -ում: Մասնակցել և ղեկավարել է Սյունիքում և Արցախում մի շարք բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների պեղումներ և ուղեգծային հնագիտական արշավախմբեր: Ղեկավարումն է ԼՂՀ Կովսականի տարածաշրջանի Կերենի դամբանադաշտի պեղումները:

**Ալեքսան Հ. Հակոբյան**– աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում: Հայոց արևելից կողմերի և Աղվանքի պատմության մասնագետ, Արցախի պատմությանն ու վիճագրական ժառանգությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ:

63 Տե՛ս «Հայկական ճարտարապետության պատմություն», հտ. I, էջ 73–75; **Н. Sanamyan**, նշվ. աշխ., էջ 330; **P. Avetisyan, R. Badalyan, A. Smith**, նշվ. աշխ., էջ 119; **Ե. Ասատրյան**, նշվ. աշխ., էջ 40–48:

64 Տե՛ս **Н. Sanamyan**, նշվ. աշխ., էջ 330; **С. А. Есаян**. Древняя культура..., с. 249–255.

## Summary

### THE FORMATION OF THE FORTIFIED SYSTEM OF THE EASTERN BORDERS OF SYUNIQ IN THE II-I MIL. BC

Preliminary observation according to the information of the field investigations in the basin of the river of Aghavno

Gagik M. Sargsyan, Artak V. Gnuni,  
Aleksan H. Hakobyan

Though the investigation of the eastern Syuniqu (the territory of Qashatagh Region of NKR) began in the XIX century, there are many unsolved problems in the history of the region. In particular, ancient settlements and fortresses of the region still have not been sufficiently examined. By the comparison of Google Earth Map's data and field investigations, more than 30 fortresses dating from II-I mil. B. C. were fixed. In this period there was the system of fortified settlements along the river of Agavno and its inflows as well as the main roads.

## Резюме

### ФОРМИРОВАНИЕ ОБОРОНИТЕЛЬНОЙ СИСТЕМЫ ВОСТОЧНЫХ ГРАНИЦ СЮНИКА ВО II-I ТЫС. ДО Н.Э.

Предварительные наблюдения по результатам полевых исследований 2013 г. в бассейне р. Агавно

Г. М. Саргсян, А. В. Гнуни,  
А. А. Акопян

Хотя изучение восточного Сюника (территория совр. Кашатагского р-на НКР) началось еще в XIX в., однако многочисленные вопросы истории региона остаются открытыми. В частности до сих пор не были в достаточной мере обследованы древнейшие поселения и крепости региона. Сопоставление данных космической съемки местности по системе Google Earth и полевых исследований позволило зафиксировать несколько десятков крепостей, датируемых II-I тыс. до н. э. Исследования региона позволяют предположить наличие в указанный период системы оборонительных сооружений, группирующихся вдоль долины реки Агавно, ее притоков, а также важнейших дорог.

ՀԱՅԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Զ (ԺԲ) քաղաք, թիվ 1 (45) հանդիս-նամակ, 2014

ՎԷՆ հանդիս-նամակի հանդիս